

մատրանն ի Յադամակերտի¹. որոյ յիշատակարանն ընդ անուանս վկայիցն սրբոց պատմեալ քարոզի մինչեւ ցայսար եւ յաւիտեան անուն սրբոյն՝ յամենայն եկեղեցիս Հայաստանեայց² աշխարհիս, Վրաց եւ Աղուանից:

10 Եւ արդ՝ այսպէս հարկաւորեալ բռնադատեաց զտկարութիւնս մեր տերն Մամիկոնեից Վահան, սպարապետն Հայոց եւ³ մարզպան, զձեռն արկանել⁴ ի գործ, որ ի վեր քան զկար գիտութեան մերոյ էր, քանզի⁵ էր քան զքան...⁶

11 ... Եւ պարտեալ⁷ եռանդեանն չարութիւնն⁸ անդէն եւ անդ դադարեալ ցածնուն: 11 Այսպէս եւ քան հզարին Աստուծոյ վճարէ զամենայն զոր կամի. ցասուցեալ ըստ չարի մեր գործոց՝ խրատե ողորբեալ. զբարի դարձ⁹ տեսանելով՝ ողորմի փութով:

Ե. Եւ արդ՝ յահագին այսպիսի մահուս¹⁰ զերծեալ անծինք շահաժողով ընչասիրացն եւ հասեալք եւեթ ինդրոյն տենչիցն, որում ուշ արարեալ բաղձան, մոռացեալ զվիշտսն՝ բերկրեալ աւգտիւքն զուարճանան: 2 Իսկ ո՞րչափ եւս առաւել գտանիցին զանձուն յաւիտենից ժառանգաւորք՝ որք եւ գյարինուածս քանից ստուգապատում կարգեալ պատմագրեցին, *չառնել մարդահաճութեան քանից յաւելուածս, ի գրումս ոսկերաց*^ա, ըստ ասացածի¹¹ սաղմոսերգին. այլ զգուշական երկիւղին¹² ընդ բազմաց լայնածաւալս¹³ գիտնական քանի նաւեցին¹⁴ անվթար, ի սուրբ Հոգւոյն շնորհսն յուսով ապաւինեալք. ունեալով փոխանակ փայտամած տախտակացն՝ զհիմն ուղղափառ հաւատոյ, եւ փոխանակ ի նմա բազմայարմար կազմութեանն հնարիցն՝ զերրեալ ինքնութեանն միութիւն զանբաժան¹⁵ սուրբ Երրորդութեանն: 3 Եւ զի նաւացն տախտակք առանց բազմաց սատարելոյ չհնարին լինել յանաւթ

1 ԱՏ. ի յադամակերտի. ԲԳտ. ի յԱդամակերտի

2 Հ. հայաստանեաց

3 Ատ. չիք եւ

4 Ատ. զձեռն արկել. ԲԳտ. ձեռնարկել Հ. զձեռն արկեալ. այսպէս ըստ Ճառ.

5 ՏՏ. քանզի ոչ էր քան զքան. այսպէս ըստ Հ. եւ Ճառ.

6 Այստեղ խօսքի պակասորդ կայ (ինչպէս ընդունում է եւ Ն. Բ.), որ նկատում է եւ նախընթաց բառերի աղաւարտութիւնից: Պակասած մասում երեւի Դ. Փարպեցին, հետեւելով Ազաթանգեղոսի յառաջաբանին՝ նմանեցնում է մատենագրի վիճակը ծովային վաճառականի վտանգալից վիճակին:

7 Հ. նախ՝ պատեալ, յետոյ՝ ուղղած այսպէս

8 Հ. չարութիւնն ունի լուսանցքում նոր զրչով

9 ՏՏ. դարձեալ

10 Հ. նախ՝ մահ, յետոյ ջնջած եւ գրուած այսպէս

ա Յմմտ. Սաղմ. ԾԲ 6:

11 ՏՏ. ասացուածի

12 Հ. երկիւղին

13 «Թուի պիտոյ լայնածաւալ ծովս» (ծնթ. Գտ.)

14 Հ. նաւիցեն

15 ՏՏ. ըստ անբաժան. Հ. զանբաժին